փաստարկների անհիմն լինելու պարագայում Ընկերության հայցն անհիմն է և մերժման ենթակա:

Ինչ վերաբերում է հայցվորի այն դիրքորոշմանը, որ պատասխանող կողմը ապացույցները ներկայացրել է ժամկետի խախտմամբ և Դատարանը այն չպետք է համարի ներկայացված, ապա Դատարանը գտնում է, որ այդ փաստարկն անհիմն է, քանի որ սույն հայցով վիճարկվում է գնահատող հանձնաժողովի 10.04.2024 թվականի թիվ 5 արձանագրությունը, իսկ հայցվորը հայցադիմումին կցել է թե՛ այդ արձանագրությունը և թե՛ 09.04.2024 թվականի թիվ 4 արձանագրությունը: Դատարանը հարկ է համարում հավելել, որ նման դիրքորոշում է հայտնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ2/15132/02/23 որոշմամբ: Բացի այդ, Դատարանը ամեն դեպքում սույն վճռի հիմքում դրել է հենց հայցվորի կողմից ներկայացված ապացույցները:

**5. Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Սույն գործով, նկատի ունենալով, որ հայցը մերժվում է, իսկ հայցվորն էլ նախապես վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված: Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսեր առկա չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 168-րդ, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ և 198-րդ, ինչպես նաև 11.1-րդ և 27.2-րդ գլուխների կանոններով՝ Դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. «Ծին նախագիծ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի՝ թիվ 5 արձանագրության 3-րդ բաժինը (բացառությամբ 3.1, 3.2 և 3.3 կետերի) անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ «Հանձնաժողովի կայացրած որոշումները» բաժնի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ կետերով կայացված որոշումները անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ դատական ակտը Համակարգի միջոցով հասանելի դառնալուց պահից երեք աշխատանքային օր հետո՝ մեկամսյա ժամկետում:

**Դատավոր** **Ա. Հովհաննիսյան**

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*